բան Մելքիսեդեկ վրդ. Մուրատեան և հետևեալ տեղեկութիւնները կուտայ այդ կիսաւեր եկեղեցիին մասին. «Աւագ խորանի կամարակապ կիսագմբեթոյն վրայ տեսնուած են հայկական գրեր, թէև անընթեռնելի, նաև հարաւային պատին վրայ նըշմարուած է Պետրոս վրդ-ի մը անուան արձանագրութիւնը, երկու հարիւր տարի յառաջ փորագրուած. եկեղեցին քառակուսի ձև ունեցած է և շատ կը նմանի Հայաստանի կիսաւեր վանքերուն.» մանրամասնութիւնները տեսնել (Սիոն. 1875. էջ 136—137, նաև մեր յօդուածը Էջմիածնի գիւղի Հայոց եկեղեցին Երուսաղեմի ձանապարհին վրայ խորագրով (Սիոն. 1927, էջ 178—182)։

ՊԵՏՐՈՍ ՎՐԴ. ԴՈՄԱՋՈՐԵՑԻ (գիւղ Բասենի).— Մբ. 1771ին Կարին կը գտնուի պաշտօնով։

ՊԵՏՐՈՍ ՎՐԴ. ԵԳԻՊՏՈՍԻ.— Մբ. 1395ին գործով Եգիպտոս կը գտնուէր։

ՊԵՏՐՈՍ ՎՐԴ. ԵԻԴՈԿԻԱՑԻ.— Մբ. 1808ի Ս. Յարութեան հրդեհէն հալիւ ազատուող անձերէն մին էր։

ՊԵՏՐՈՍ ՎՐԴ. ԹՕՔՐԱԴԴԱԼԵՑԻ.— Մբ. պատանիքի 1793ին, (✻ 1855)։

ՊԵՏՐՈՍ ՎՐԴ. ՀԻՒՍՆԻ ՄԱՆՍՈՒՐՑԻ.— Մբ. ժամօրհնող 1807ին. Նոյն թուականին Ս. Յակոբի եկեղեցիին կը նուիրէ Ընիրեաց պատկեր մը. վախճանած է 1818ին, իր տապանագիրն է հետևեալը. «Այս է տապան հանգստեան սուրբ Յակոբայ միաբան Հիւսնի-Մանսուրցի ժամօրհնող Պետրոս վարդապետին որ հանգեաւ. ՌՄԿԷ» (=1818)։

ՊԵՏՐՈՍ ՎՐԴ.— Մբ. 1863ին ժամասաց։

ՊԵՏՐՈՍ ՎՐԴ.— Մբ. Նւ. Իզմիտի. Քէօթահիոյ և շրջականերուն 1701ին, կը յիշատակուի Մինաս Ամգեցիի Օրագրութեան մէջ։

ՊԵՏՐՈՍ ՎՐԴ.— Մբ. թարգման 1667ին։

ՊԵՏՐՈՍ ՎՐԴ.— Մբ. 1688ին Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Ստեփան վրդ. Լեհացիին Թարգմ. Բարոյական Սոնակաց ձեռագիրը։